

զեան գաւառի համար 39.000 ռուբլի փող և 2045 պուղ ու 200 չիֆիրտ ցորեն: Անդադար աշխատութեամբ կարճ միջոցում խնդրելով միջնալ գումարներն ստանալու իրաւունքը, այնուհետ և ստատիկ փութաշահութեան սխեմ թիֆլիսից ցորեն և ախիւր ուղարկելը հարկաւոր տեղերի համար, և յայտ ունենալ, որ այդ ցորենը և ախիւրը տեղ հասնելուց մեր չուկաներում ևս հացի զինը բաւական կ'ըլլին:

Բացի այդ կատարութիւնից խնդրած օգնութիւնները, պարտի ինքնատուով թիֆլիսի մէջ ստորագրութիւն է բացվել ազգային վաճառականների մէջ յօգուտ շաւարների և այժմ յաճողութեամբ շարունակվում է: Լուսւմ ենք, որ մեծ պարտքը ժողովրդեան համար ամենայն կողմանէ զիւրացնել տալու համար և հոգում է այժմ մեր գաւառի մի քանի այլ կարեւորութիւնների մասին ևս, որոյ շարքումը զլիսաւոր տեղն է բաժնու ածուխի խնդիրը: Յայտնի է, որ փայտ կտրելու ածուխ այրելու համար հարկաւոր է իրաւունք և տունակ ստանալ անտառապետից վճարելով նորա համար նշանակեալ գումարը, և այնուհետև փայտ ու ածուխ պատրաստել և դուրս բերել ծախելու համար: Բայց անտառի վերակացուների և նոյն իսկ անտառապետի կատաշխարհութեան և նորա ընտելութեան հետաւորութիւնը (նա կենում է Զանգազորի կողմից զիւրում) այնտեղ են հասցրած, որ մի բեռ ածուխը այժմ մեր մէջ ծախվում է 6 ռուբլի, այն ևս լաւ է, եթէ հարկաւոր ժամանակ գտնուի էր, ուստի այս բուպէիս հացի խնդրից ոչ պակաս նշանակութիւն է ստացել ածուխի և փայտի խնդիրը: Այժմ տեղեկանում ենք որ պարտքը խնդրած է տէրութեան 10.000 ռեա փայտ և 2000 ռեա ածուխի տունակ տալ ձրիաբար մեր գաւառի համար: Այլ և ոչ պակաս զովասանաց արժանի է պարտի աշխատութիւնը գաւառի համար (որդուրաթի մէջ մի օրիւնաւոր դեղատուն և մի հմուտ բժիշկ ունենալու մասին, որոց պակասութիւնը խիստ զգալի է մեզ համար:

Մի Ազուլեցի

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՊԻՆ

Թիֆլիս, 5 դեկտ. 79

Ուղարկելով խմբագրութեանդ 5 ռուբլի 30 կօպ. հասուցանելու կամ Վարդապետանո ընկերութեան, կամ վանայ սովիւց, որին առաւել հարկ կը համարէք, ցանկանում եմ մի քանի խօսք ևս յիշել: Հայաստանի քաղաքներում և գիւղերում տեղ տեղ կայ հետեւեալ գեղեցիկ սովորութիւնը, որ առհասարակ հրաւրեցնում, սեզան նստած ժամանակ, առաջի բաժանները սկսում են դատարկել կոյսեր, փոխարքայի, կաթողիկոսի կենաց, ազգիս հաստատութեանը, լրագրների յարատւութեանը և այլն, և հետեւապէս հետաքրքրական խօսակցութիւններ են յառա՛կ ցալի յիշեալ թանկագին կեանքերի բարեմագրութիւններից: Երանցից յոյանում են օգտաւէտ մտքեր թէ բարոյապէս և թէ իրապէս Բայց մեր քաղաքում այդ սովորութիւնը դժուար կը տեսնեն, մեր հրաւրեցնելու, տաճարապետը առաջի բաժանները կատարելէ որոշ որոշ դատարկել տանտիրոջ և ընտանեաց կենաց, երկրորդը նոյնպէս սրոշ որոշ ներկայ գանվողներ, երրորդը հետաւոր բարեկամների, չորրորդը՝ Նոյնի ըսկած իւրաքանչիւրի ազգի մէջ որ ներկեցեալի աշունը որ յիշեն՝ նորա հոգեթաւը պէտք է վայելեն, և ապա պարտապանաց... պիճալ ցնաց:

Սակայն մեր այն յետին ժողովրդական դասակարգի հասարակ, բայց համեստ ընթիլքում, որը պարտաստել էր ներկայ ամսին պ. Գրիգոր Մատթէանը, որտեղ Տէր Բաղդասար հայրը առաջի բաժանը առնելով ձեռքը բարեմագրից երկրորդ փութիւնը տանկարանակ սովորական շարքի և յառաջադիմութիւն Վարդապետանո ընկերութեան, և բոլորեցանք ցանկանալով մեր բարեմագրութիւնը իրապէս լինելու, որի համար իւրաքանչիւրս սկսեցինք մեր ընչին լուսման ձեղն ազգային գանձանակը: Բաղդասար քաճանայ Ղաւազեանց 1 ռ., Գրիգոր քաճանայ Մանդակունի 1 ռ., Գրիգոր Մատթէան 1 ռ., Եփրեմ Աւետիսեան 50 Կ., Կոնստանտին Սուլիսեանց 40 Կ., Գասպար Սուլիսեանց 20 Կ., Գարբէլ Գարբէլեանց 20 Կ., Ընդամենը 5 ռ. 30 Կ.: Ի՛նչ արած, քանի որ մեր անհոգութեամբ ազգութեան խաւարի մէջ կամաւ

ու բայց աչքով խարխալում ենք և երբէք չենք ուզում ուսման լոյսի օգտուէտութեան ուղարկութիւն դարձնել, մեր նախապաշարմունքներով լի սովորութիւնները վերադասելով քաղաքակրթեալ եւրոպական ազգերից, չենք ուզում նորանցից օրինակ վեր առնել և նորանց հետեւել, սթափելով մեր դարաւոր ու մահադուշակ քնից, հետախոսութիւն անելով ապագային՝ ջանալ բարեօրէնու գանձարանն և պարտաւորել իւրաքանչիւր ընկերութեան (համբար) թէ քաճանայների, թէ ծառայողների թէ վաճառականների, թէ արհեստագործների և այլն, ամեն տարի ժողովել իրանց մէջ ստորագրութեամբ ամեն մի հոգուց մի մի ռուբլի: (Ինչ մեծ կամ դժուար բան, տարվայ մէջ մարդազուլիս մի ռուբլի ազգային գանձարանին ընծայել.) և յանձնել ազգային գանձարանին, և մէկ խօսքով ամեն մէկին մասնատելով ամեն օգտուէտ զիւրքերի մէջ լինի միայն ազգային գանձարանի արդիւնաւորութիւնը, և որի արդիւնները հարկաւոր միջոցներում կարողանան գոհացուցիչ օգնութիւն հասցնել թէ Վարդապետանո ընկերութեան, թէ սովետաձեւից, թէ հրկիզիւց, թէ կառուցանելու հարկաւոր տեղերում ուսումնարաններ, և թէ ուրիշ հարկաւոր պէտքեր հոգալու, որով արդարեւ մեր ազգի ապահովութեանը մասնաւոր ծառայութիւն արած կը լինիէք, այլ ևս մի ռուբլի խնայելու համար՝ չէինք կանգնի լսելու ու տեսնելու հայ ազգի աղէտալի թշուառութիւնները և յուսահատվել հայ անունը կրելու համար, հայ անուն առում եմ, որի կրող աշխարհակալ զիւրեցանքը՝ ազգերի պատմութեանց մէջ դրանելի փառաց յիշատակի անմահ արձաններ կանգնեցրին, որը չիմա մենք մեր ժառանգութեամբ, անհոգութեամբ ու անհետաւորութեամբ ուզում ենք նստեցնել այդ փառք կրող անուն չեղածութիւնը: Կան մեր ազգի մէջ շատ աւելորդ սովորութիւններ՝ եթէ օգտուէտի փոխարդիւնը՝ որոց համարումը խիստ դժուար է, արդեօք ազգային գանձարանը իւրաքանչիւր տարի որքան օգուտ պէտք է ստանար, և որովհետև այս օգտուէտ միջոցների վրա ուղարկութիւն չենք դրածուում, գործէ մէկ մէկ հրաւրեցնելի մէջ էլ նախապէս յիշեք մեր ազգը, բանա՛ք մեր քսակը, ձգե՛ք մեր լուսման ազգային գանձանակի մէջ և ապա անխղճահար ու գո՛հ սրտով վայելե՛ք մեր խնջոյքը:

Գրիգոր քաճանայ Մանդակունի

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՊԻՆ

Բագու, յունվարի 23

Բազու քաղաքում յօգուտ Վարդապետանո ընկերութեան ժողոված մէկ հազար չինգ հարիւր ռուբլիս պ. Տէր-Սանեանցի միջոցաւ հասուցանելով ձեզ (ՎՄՆԿՆ Խ 162, 79 թիւ), խոստացել էի չինգ հարիւր ռուբլիս և ժողովել, երկու հազար լրացնելու համար: Բայց որովհետև Բագուի այժմեան անկեալ դրութիւնը չէ ներում շարունակել լի յանձն առած պարտաւորութիւնը, վասնորոյ այդ չինգ հարիւր ռուբլիս ուղարկում եմ ևս, լի սեփականութիւնից, ընդ նմին խնդրելով, խմբագրի տէր, բարեհաճէ՛ք նուիրատու պարտնների անունը: Եթե ՎՄՆԿՆ համարներից մէկի մէջ, որք են. Նիկոլայ Վարձիգունեանց 150 ռ., Ներսէս կրասիլնիկեանց 100 ռ., Արթուր Սարգսեանց 50 ռ., Սամուէլ Բաղդեանց 50 ռ., Եղարթ Տէր-Սանեանց 50 ռ., Եղարթ Թումանեանց թարվիզցի 50 ռ., Եղարթ Սարգսեանց 35 ռ., Մինաս Արիսեանց 35 ռ., Գրիգոր Թումանեանց 35 ռ., Աղէքսանդր Աղամանց 30 ռ., Յովհաննէս Չախմախապեանց 25 ռ., Գրիգոր Շահկեղանեանց 25 ռ., Առաքել Մատթէանց 25 ռ., Յակոբ Աւետիսեանց 25 ռ., Նիկոլայ Սարգսեանց 25 ռ., Եւզգոր Գրիգորեանց 25 ռ., Արթուր Վերմիլեանց 25 ռ., Եղարթ Բուրազեանց 25 ռ., Եգոր Բալանթարեանց 25 ռ., Եղարթ ժամարեանց 25 ռ., Յարթ Տէր-Յակոբեանց 25 ռ., Աղէքսանդր Տէր-Յակոբեանց 25 ռ., Բկկար Մանուշարեանց 25 ռ., Գարբէլ Ալիբեկեանց 25 ռ., Եղարթ Աղամանց բաղդեանց 25 ռ., Ոսկան Խաչատրեանց 25 ռ., Միկիտ Վարդանեանց 25 ռ., Կանտորա Մելիքեանց և ընկերութիւն 25 ռ., Եղարթ Լիւնաշով 25 ռ., Յովակի Թումանեանց 25 ռ., Միկիտ Միկիտեանց (պ. ձգարտորանցի ձեռքով) 25 ռ., Գրիգոր Ալիզեանց 25 ռ., Աղաւի Յովակեանց 25 ռ., Միկիտ Շահկեղանեանց 25 ռ., Բուրազեանց Արիկեանց 25 ռ., Յակոբ Աղբեանց 25 ռ., ՅՈՒՄԱՆ Օրբելյանց 25 ռ., Աղաւան և Ստեփան Ծոնանեանց 20 ռ.,

Միրզաբեկ Միրզաբեկեան 20 ռ., Նազար Շահնազարեանց 20 ռ., Մկրտիչ Պատուականեանց 15 ռ., Խարայէլ Բէգարեանց 10 ռ., Աղէքսանդր Խաչիկեան 10 ռ., Մկրտիչ Աղէքսանեանց 10 ռ., Գրիգոր Աղամանեանց 10 ռ., Յովհաննէս Ղասաբեանց 10 ռ., Երիտասարդ ոճն 10 ռ., Առաքել Գրաբեանց 10 ռ., Եւրամիշ Եւրամիշեանց 10 ռ., Սողոմոն Տէր-Ստեփանեանց 10 ռ., Եւսայի Պօպուկեանց 10 ռ., Ստեփան Թաթոսեանց 10 ռ., Թովմաս Ամիրեանց 10 ռ., Սիւնն Ղազարով 5 ռ., Գասպար Բալամանց 5 ռ., Խօսրով Գանիկեանց 5 ռ., Հարսապետ Հախումեան 5 ռ., Աղէքսէյ Գարտապեանց 5 ռ., Նիկոլայ Ղազարեանց 3 ռ., Աղաւան Թումանեանց 2 ռ., Պօրոս Խանդամիւրեանց 3 ռ., Մկրտիչ ձանուսեանց 3 ռ., Արտէմ Բաղդեանց 3 ռ., Զաւար Աղամանեանց 2 ռ., Միքայէլ Բինիակեանց 2 ռ., Սամսոն Չէրքիզեանց 1 ռ., ՓՈՄԱ Սյանիւնեւ 1 ռ., և Յովհաննէս Վարձիգունեանց 500 ռ., ընդամենը 2000 ռուբլի: Այս գումարի մէջ է 500 ռուբլի իմ վճարած, մշտնջենաւոր ազգամութեան համար:

Յովհաննէս Վարձիգունեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՌԵՐ

ԱԽԱՅԻՍՏԻՑ մեզ գրում են: «Մեր ինտէլիգենցիայի մի ընտիր խումբ արդէն պատրաստի ունեւում հարկաւոր գումարը մտադիր է շուտով բաց անել մի օրիորդական ուսումնարան, որը պրօգրամման կը լինի տեսական կողմից միայն սովորեցնել գրել և և կարգալ, իսկ գործնական կողմից կատարեալագործել այն արհեստների մէջ, որոնցով կարելի կը լինի կանանց մատակարարել ու միջին իրանց սեփական պիտոյքը, այլ և արդիւնահասնել և շրջակայ տեղերի պիտոյքը, ինչպէս, օրինակ, Ալարալայի կանանց և մարդկերանց հագնող շորեղէնները:»

Մեզ հազարգում են ԱԽԱՅԻՍՏԻՑ և հետեւեալը: «Տեղական մանկավարժներից շատերը համոզվում են, որ այժմեան պրօգրամմայով Ալարալայի օրիորդական ուսումնարանում գործը առաջ տանելը օրից օր դժուարանում է, որովհետև շատերը ծնողներից նկատելով որ իրանց աղջիկները ուսումնարան մտնելու օրից այլ ևս ստաչում են դէպի տնային գործերը,—կամ սկսում են հանել զպրօցից իրանց աղջիկեանց, կամ թէ չէ, հէնց սկզբից չեն վստահանում ուղարկել նրանց զպրօց:»

Գուրս եկաւ մամուլի տակից մի բառգրոյկ ուսուց լեզուից ի հայոց լեզու, աշխատասիրութիւն Գ. Հախապետեանցի, Գիրքը բաղկացած է մօտ 700 երեսից: Երախում է թիֆլիսի Չարաբի Գրիգորեանցի, Վարդանեանցի և Կենտրոնական գրադատանոցներում, Գրին է թիֆլիսում 1 ռ. 30 Կ., իսկ ուրիշ քաղաքների համար 1 ռ. 50 Կ.: Գուճարով առնողներին զիջումն կը լինի:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մի պարուն գրում է մեզ. «Ներկայ տարվայ առաջին համարում ՎՄՆԿՆի ֆեյետոնիստը յիշում է թէ ձեր լրագրի մէջ տեղաված է եղել փոխտուր-խնայողական զիւրական ընկերութիւնների կանոնադրութիւնը: Յանկանալով այդպիսի մի կանոնադրութիւն ունենալ, բարեհաճէ՛ք ուղարկել ինձ ՎՄՆԿՆ համարը, որի մէջ տպված է նա:» Մենք պարտաւորութիւն ենք համարում յայտնել պարունին, որ այդ ընկերութիւնների մանրամասն կանոնադրութիւնը, ինչպէս նա վաւերացրած է մինչտուրութեանց, տպված է եղել ՎՄՆԿՆի մէջ, հայոց թարգմանութեամբ, 1873 թ.ին, № 10 և 11 մէջ, իւրագրութեան մէջ զեւանվում այդ հին համարները, ուղարկեցիք պարունին:

Հինգրթի, փետրվարի 7-ին ուսուց սիրողների ներկայացումն, որ պէտք է լինի Արժուտութեամբ, յետ ցգվեցաւ սիրողներից մինի հրահանգութեան պատճառով:

Կիրակի օր, փետրվարի 10-ին Արժուտութեամբ ընտրու լինելու Ալաւանակու կոնցերտի ժամա-

նակ երգեցողութեան հետ միացրած կը լինեն կենդանի պատկերներ:

ՄԵՆՎԱՐԱՔԻՍ գիւղից մեզ գրում են, որ փետրվարի 1-ին առաջակները գիշերով կտորեցին Յ. Արոյնեանցի տունը և տարան բաւական փող, ոսկեղէն, արծաթեղէն և այլ գանազան իրեղէններ, Ալազանները յայտնի չեն: Նոյնպէս և անցեալ ամսին անպատ առաջակներ թալանեցին մի զարաքիսեցուն և տարան նրանից 1700 ռուբլ:

Մեզ գրում են ՄԵՆՎԱՐԱՔԻՍԻՑ հետեւեալ: «Մի քանի զարաքիսեցի կանայք, չքաւոր և որր օրիորդներն ուսման գործի մէջ օգնելու նպատակով, մի ընկերութիւն կազմեցին, ամսական մի որոշ տարրով Արժուտութեան թիւը հասել է 30-ի և շարունակում է աճել: Ընկերութեանը օգնում են նոյնպէս և կողմնակի մարդիկ: Պ. Խ. Արոյնեանց 20 ռուբլ արժուութեամբ մի պատի ժամացոյց ընծայեց Վարաքիսի օրիորդական զբարոյցը:»

Մեզ խնդրում են տպել հետեւեալ ՄԵՆՎԱՐԱՔԻՍԻՑ: «Ալարալայ ստացվեցաւ Վարդապետանո ընկերութեան 1878—79 թիւ Տեղեկագիրը, որի մէջ ոչ մի երեսում չը կար զարաքիսեցի Ղազար Աղաբաբեանցի 100 ռուբլ նուէրը, Նուիրատուն ցանկանում է այդ գանցաւորութեան պատճառ իմանալ:»

Փետրվարի 7-ին եղանակը ԹԻՖԼԻՍԻՍ կրկին ցրտեց:

ՎՄՆԿՆ Հայաստանի տպել է և «Обзоръ» լրագրիւր արտատպել է մի տեղեկութիւն Ղարաքիսի անտառապետի գործի մասին, իբր թէ թիֆլիսցիներից մի քանիսները հրածարվեցին, ասելով որ երբէք ոչինչ չեն հաղորդել ՎՄՆԿՆին: Այդ մեզ շատ զարմանում է, որովհետև մենք պահած ունենք խմբագրութեան մէջ այն նամակը, որի տակ այն բոլոր պարունները ստորագրել են, որոնք յանձն էին առնում պատասխանատուութիւն անտառապետի մասին գրված տեղեկութիւնների փոքարեութեամբ:

ԱԼԼԻՍԱՆԻՍԱՊՈԼԻՑ գրում են. «Գէպուտառների նախագահութեամբ կազմված ժողովը, որը վճռել էր քաղաքի նշանաւոր դրամատեղիներից հանգանակութեամբ հաւաքել մի յայտնի դրամագրուս ախիւր առնելու և տեղույս չքաւոր ընտանիքներին անդադարաճար բաժանելու համար, չը յաջողվեցաւ: Մասնաժողովը չը կամեցաւ ծանրաբեռնել այս պարտականութեամբ միայն դրամատեղիներին: Նրանք տուեցին հանգանակութեանը ընդհանրական ընտրութիւն, և ամեն փոքր շատե ունեւոր քաղաքացի պարտաւորվեցաւ ձեռք ի լուսման ն պատասխան տոյց գահն արանի մէջ: Արդէն հաւաքված է 15,000 ռուբլի, որով մասնաժողովը անդամներ պէտք է գնեն ախիւր և փոխադարձաբար պէտք է բաժանեն չքաւոր ընտանիքներին:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՒՐԻՍԱ

«Голосъ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է հետեւեալը. «Հայերը իրանց կողմից ամեն միջոցներ գործ են դնում համոզութեամբ, որ նա կտարի Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը և այս օրերս իրանց բոլոր լրագրիներում մշտ համոզիչ հրահանգներ են տպում զէպիկ Եւրօպան. այս պատճառով անցեալ օրը տպագրութեան բաժնի գլխաւոր խիստ յանդիմանական թուղթ ուղարկեց հայերին, ասելով որ կանգնեցնեն իրանց գանգատները և այս խնդրի վրա շարունակվող ամեն տեսակ բանակալի վերջ դնեն: Բայց անկարգութիւնները այնուամենայնիւ շարունակվում են Հայաստանում, և բուրբիլը

իրանց սովորական ձևով շարունակում են իրանց բարբարոսութիւնները, կողոպտելը և հարստահարութիւնները: Բ. Իրան հրատարակած բոլոր միջոցները առանց որ և իցէ գործադրութեան մնացին այն պարզ պատճառով, որ նրանց չեն գործադրում: Եւ այդպիսով անպատճառ կը գայ ժամանակ և կը հասնի այն րօպէն, երբ ներուզան իր ձեռքը կտանի հայոց ինչպէս և Կ. Պօլսի հայերը յի թէ յուսահատում են, բայց աչքի առաջ ունենով ներուզանի հայոց գործի մէջ խառնվելը, դիտարութիւն ունեն այստեղ մէկ մեծ լրագիր հրատարակել Ֆրանսերէն լիզառով, որը ներուզանի առաջ ազգային օրօրան կը դառնայ:

«Temps» լրագրի Կ. Պօլսի թղթակցը գրում է հետևեալը.

«Արբազան Հասունը Կաթօլիկ հայոց պատերազմը նշանակալիւ առիթով, հանդիսար իրարով տեսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ: Պարզ նկատել են, որ սրբազան Հասունը Արդիւ-Համիլի հետ խօսած ժամանակ, միշտ աշխատել է զանցառութեան տալ և չարտասանել—հայ—բառը: Մի հաստատ դիտարութեամբ, իր հօտի մասին խօսած ժամանակ, նա բացառապէս կաթօլիկ բռուն էր գործածում: Արբազանի այս վարմունքը չը պէտք է գարմանցնէ ձեր այն ընթերցողներին, որոնք զեռ կարողացել են պահել իրանց մտքը մի որ և է իշխատակ այն բոլոր յօդուածներին, որ «Temps» լրագրը գրել է հասունեան հարցի մասին: Հայոց ազգը միշտ և ամենայն իրաւամբ յարձակվել է ս. Հասունի այն դիտարութեան դէմ, որով նա, յօգուտ հասնական պրօպագանդայի, ձեռնուած է կործանել ազգային զգացմունքը. և այս պատճառով է, որ ես միշտ ամենայն թախանձանօք աշխատել եմ ցոյց տալ այն սարօրինակ պատիւ, որ գործում է մեր քաղաքականութիւնը այս անպիտան գործին աշխարհ ու եւանդուն օգնութիւն տալով:

«Հայոց լրագրները բոլորովին պարզ կերպով արտայայտում են իրան զայրոյթը այս ազգայնութեան ուրացման մասին: Նա կը բաւականանաւ այդ լրագրների յօդուածներին միայն մէկը քննելով, որ տպւած է «Մասիս»-ում:» — Հասունեանները յաղթական հանդիսացան, ստում է այս լրագրը, ս. Հասունը ներկայացաւ սուլթանին, և մի ձուռ խօսեց, որի մէջ նա իրան կաթօլիկաց պատրիարք է անուանում, առանց յիշելու—հայ—անունը: Այս բանը մեզ բնաւ չէ գարմանում, մանաւանդ, որ նա ծնունդով հայ չէ, և որ նա յայտնի է իբրև ազգային եկեղեցու ամենաերեւեալ թշնամի, և այժմ նա մի պաշտօն է յանձն առել, որով պէտք է մի մեծ հասարակութիւն կազմի, որի անդամները բողոք կացած կը լինեն կաթօլիկ հայերից, ասորիներից, յայններից և ուրիշ շատերից. և այդ հասարակութիւնը ոչինչ ազգութեան չի պատկանի, և միայն կը կրի իր վրա կաթօլիկ է տրիկ է տ տը:—

«Նշույն յայտնի է, հասնական եկեղեցին ոչինչ ազգութիւն չէ ձանաչում: Նրա սրատեմը կայանում է նրանում, որ ժողովրդներին հպատակեցնի իր օրէնքներին, խլի նրանցից նրանց ազգային բնաւորութիւնը, դրա փոխարէն տայ նրանց կաթօլիկ բնաւորութիւն, և այսպէսով իրագործէ տիեզերական տիրապետութիւնը: Կաթօլիկութիւնը կէտարութիւն է, և ս. Հասունն էլ նրա հաւատարիմ գործիքն է. առանց կամքի, առանց սեփական համոզման, նա ամբողջապէս անձնատուր է Հասունի հրամաններին:

«Հայոց ազգութիւնը յիշված չէ ս. Հասունի ձառի մէջ, բայց փոյթ չէ. Հասունի հօտը շատ էլ չէ կարող պարծենալ այդ ազգութեան անդամներով:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՀՊՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մեր ազգայնոց մանաւանդ Հայաստանի մէջ բնակողաց խորին ուշադրութիւնը կուզեմք հրաւիրել այնպիսի ինչորոյ մը վրա, որ Հայ ազգին վերաբերութիւն ունեցող գործոց մէջ ամեն անցաւոր ինչորէ վեր է, և մեր ազգային գոյութեան համար իսկ ամենամեծ կարևորութիւն ունի: Իրաւ է որ պատմութիւնն ու աւանդութիւնն ազգի մը մեծ իրաւունքներ կուտան իւր հայրենի երկրին վերաւ, բայց դարերն և աշխարհավարութիւնը դիւրաւ կը ջնջեն այդ յիշատակները, մանաւանդ ներկայ դարու մէջ, որ ամեն կերպիւ զրական և նիւթական է, եթէ ներքի է այսպիսի բացատրութիւն մը գործածել: Բընակութիւն և հողատիրութիւն, ահա այն երկու նիւթական հզօր միջոցներն որով ազգ միւր հայրենիքին տէր կը մնայ, մինչև անգամ ինչպէս մեք՝ քաղաքական ամեն անկախութիւն կորուսանելէ ետև: Պատմութիւնն և աւանդութիւնը երկարորէն կը խօսին չըրևատանի մը Ասորեստանի վրա. բայց եթէ այսօր Հրէաստան և Ասորեստան չունին, պատճառը միայն այն չէ թէ դարերն ու պատգամները փոխուած են, այլ և վասն զի այդ անուններով ձանչուած երկիրներն այժմ իրենց հին բնակիչներէն կամ խիտ քիչ կը պարունակեն և կամ բնաւ, և թէ այդ տեղերու հողն այժմ բոլորովին օտար ձեռաց մէջ կը գտնուի: Գաղափարաց այս կարգին մէջ մինչև աստիճան մը, թէ և անկատար կերպիւ, կրնայ մեկնուել Հայաստանի Քիւրդստան անունը տրուելն ալ: Աշխարհացոյց քարտէսներու վրա ակնարկ մը նետել բաւական է տեսնելու թէ պարագայներն և աշխարհավարութիւնը մինչև ուր տարած են քիւրդներն, որք Օսմանեան Հայաստանի մէջ այժմ մէկ կողմէն մինչև Մասիս լեռան մօտերն և միւս կողմէն մինչև Տէրախ կը տարածին, առանց նկատելու այդ երկու կէտերուն միջև գտնուած տեղերը: Արդ, թէպէտ այս պարագայիս մէջ բացառիկ պատճառներ կան՝ որք Հայոց իրաւունք կուտան այդ անուանափոխութիւնը մերժելու, ոչ նուազ ստոյգ է, իբրև ընդհանուր կանոն, թէ ազգի մը գոյութեան իրաւունքը չը կրնար միայն պատմութեան և աւանդութեանց վրա հիմնուած լինիլ, այլ պէտք է որ այդ ազգն իւր հայրենի երկրին վրա ընդարձակապէս բնակութիւն ունենայ և ընդարձակապէս հողատէր լինի անդ:

Միւս կողմէն մեր ազգային գոյութեան պատմութեան մէջ կարևոր տեղ մը պիտի բռնէ սա տխուր ճշմարտութիւնն ալ թէ Հայք պարագայից բերմամբ, և կամ աւելի ծիշդ է ըսել՝ ստիպմամբ, այնպիսի ընթացք մը բերուած են, որ իւր գոյութիւնը պահպանել ուզող ազգի մը բռնելու ընթացից բոլորովին հակառակն էր: Գուռներում թողած եմք մեր հայրենիքն, ուր մնացած ազգայինք այնքան քիչ հող տարած են հողատիրութեան, և ուր հողն ամենամեծ մասամբ օտարի ձեռք կը գտնուի այժմ: Նոյն աւելի Հոսանքն որ կը շարունակէ տակաւին ոչ միայն արտաքին այլ և ներքին պատճառներով: Գաղթականութիւնն ոչ ևս իբրև հարկ, այլ և իբրև սովորութիւն գործած է և երբ Հայ ազգութեան մը ջնջում մէջ շահ ունեցող զաղտնի աշխարհավարութիւն մ'ամենայն ինչ ՚ի գործ կը դնէ Հայաստանի մէջ միայն երկրի անունը Հայոց թողուլ, որպէս զի օր մ'ալ իրաւունք ունենայ այդ անունն ալ վերջնականապէս գրաւելու, մեր հայաստանցի խեղճ և տգէտ ազգայինք կամաւ այդ թակարարին մէջ կիշտան իրենց հողերն իսրամաց և մանաւանդ Քրդաց վաճառելով, որպէս զի ազգատիրութեան մէջ առժամանակայ սըփոփանք մը գտնեն:

Արդ, մեր նպատակն է զգուշացնել մեր ազգայիններն այդ վնասակար հակափոխութեան դէմ, և այս ալ ոչ թէ պարզապէս

քաղաքական նպատակի մը համար, զի մեք Հայոց բազմամարդութեան և հողատիրութեան քաղաքականապէս անմիջական կարևորութիւն տալ չեմք ուզեր, այլ և իրենց անտեսական օգտին և ազգային պահպանութեան շահուն համար:

1.—Հայոց ազգային գոյութիւնն աւելի դիւրաւ կը պահպանուի իրենց հայրենի երկրին մէջ, քան թէ օտար ժողովրդոց ուղեկանութիւն մէջ: Արդեւ զի Հայք իրենց հայրենի երկրին մէջ մնան ոչ միայն ազգային զգացմամբ, այլ և շահով, պէտք է որ հողատէր լինին անդ. հետևաբար, հողատիրութիւնը կարևոր է Հայոց իրենց ազգային գոյութիւնը կարենալ պահպանելու համար: Այս խորհրդածութիւնն ընկելով, ազգային գոյութիւնը պահպանելու հարկն սպացուցանելու հոգին աղտո կը նկատուի զմեզ, իբրև Հայ մը, որ Հայոց կը խօսի:

2.—Այն ազգը միայն լաւ կը պահէ իւր գոյութիւնն, որ իւր նախահարց թողած ժառանգութիւնները պահելու մէջ ամենին աւելի յաջողակութիւն ցուցած է: Արդ, Հայաստանի հողն, անոր լեզուին ու կրօնքին պէս, մեր նախահարց մէկ ժառանգութիւնն է. ուստի այդ հողը պահել կարևոր է մեր ազգային գոյութիւնն ապահովելու համար. և ինչպէս որ հայ մը չքաղաքութիւնը պատրուակ բռնելով չը կրնար իւր կրօնքը կամ լեզուն վաճառել, պէտք է որ նոյն պատրուակաւ իւր հողը վաճառէ, երբ հողատէր է նոյն իսկ իւր հայրենի երկրին մէջ, այլ պահէ զայն իբրև հայրական թանկագին ժառանգութիւն:

3.—Ազգային գոյութիւն մ'ոչ միայն բարոյական գործութեամբ կը պաշտպանուի, այլ և նիւթական հարստութեան արտադրած գործութեամբ: Արդ՝ հողն հարստութեանց ամենին կարևորն է, իբրև ամենին տեւական և ամենին հաստատունն—ուստի, ազգ մը եթէ կը փափաքի իւր գոյութիւնը պահպանել, պէտք է նախ այդ նիւթական գործութիւնը պահպանել կամ ձեռք անցնել:

4.—Հողը միայն նիւթ մը, վաճառք մը չէ, այլ և սկզբունք մը, գաղափար մը: Արդ, զայն վաճառել, նիւթը նիւթոյ հետ փոխանակել է, բայց միանգամայն վրայ տալով այդ սկզբունքը, գաղափարը:

5.—Հողը թէ քաղաքական և թէ անտեսական տեսակէտով, անհատական անկախութիւն և ազատութիւն կ'ենթադրէ: Նա որ հողատէր է, աւելի ինքնուրոյն կը գործէ, աւելի ազատ է քան այն մարդն, որ ստիպուած է աշխատել ուրիշի մը հողին վրա, մանաւանդ երբ սա իւր ցեղին թշնամի ցեղէ մ'է: Արդ այդ անձնական անկախութիւն ու ազատութիւնը պահպանել, բնականաբար անհրաժեշտ է ազգային գոյութիւնն ալ պահպանել կարենալու համար. հետևաբար, պէտք է որ ազգ մը հողատէր լինի իւր հայրենիքին մէջ, եթէ կուզէ իւր գոյութիւնը պահպանել:

6.—Ազգութիւնը նկատելով իբրև էակ մը, հողն անոր մարմինն է, ինչպէս որ լեզուն, պատմութիւնն, աւանդութիւնքն և մինչև աստիճան մ'ալ կրօնքն այդ էակին հոգին են: Արդ, ինչպէս որ մարմին չունեցող էակները գործ չունին այս աշխարհիս մէջ, չեն կրնար ազգաց շարքին միջ տեղ ունենալ այն ժողովուրդներն, որք իրենց հայրենի երկրին մէջ հողատէր չեն և այն ժողովուրդք, որք իրենց քաղաքական անկախութիւնը կորսնցնել և առանց հողութեամբ կամ գաղթականութեամբ իրենց հողին ալ մէկ մեծ մասը կը կորսնցնեն հաշմ կամ վերաւորապէս մարմին մ'են միայն:

7.—Հայրենասիրութեան գլխաւոր աղբիւրն և նիւթական շարժառիթն հողատիրութիւնն է. նա որ երկրի մը մէջ հող չունի, մեծապէս հակառակ է այն երկրիւր չը սիրելու: Արդ, հայրենասիրութիւնն զգացում մ'է, որ միայն կրնայ պաշտպանել ազգային գոյութիւնը: Իբրև ունեւք այդ զգացումը դարձնելու

մէջ միայն կը փնտռեն, մեք ամեն տեսակազիտաց հետ համոզուած եմք որ հողատիրութիւնն աւելի շոշափելի, աւելի տեւական կերպիւ կարտադրէ զայն:

8.—Նկատելով Հայաստանի Հայոց այն երկու կարգերն, որոնց մին իւր հողը վաճառած կամ որ և է կերպիւ իւր ձեռքէն հանած է իւր երկրին մէջ մնալով հանդերձ, իսկ միւսը զայն վաճառելէ կամ որ և է կերպիւ իւր ձեռքէն հանելէ ետև նաև գաղթած է, կը տեսնելք որ առաջինը տեսական և բարոյական տեսակէտով ստորին դիրք մը ստացած է. իսկ երկրորդն ընդհանրապէս իւր ազգութիւնն ալ կորսնցուցած է: Արդ, այս երկու վիճակներն ալ ազգակործան են, թէ և տարբեր աստիճաններով:

9.—Իբրև հետևութիւն այս սկզբանց, կրեմք թէ հարուստ դրամատէր մը պէտք չէ ազբատ հողատէրի մը հետ բաղդատուի: Նախ, վասն զի, ինչպէս տեսանք, հողն և դրամը համարժէք չեն. երկրորդ, դժուարաւ կրնայ ցուցուիլ ազբատ հողատէր մը, որ իւր հողը վաճառած լինելուն պատճառաւ հարուստ դրամատէր մ'եղած լինի: Ընդհակառակն, Հայաստանի հազարաւոր Հայք կենդանի վիպյներ են թէ վայրկեանական տկարութեամբ իրենց հողը վաճառելէ կամ ուրիշ կերպիւ ձեռք հանելէ ետև, աւելի թշուառացած են:

10.—Վերջապէս Այլի վաշան Հայաստանի միջ խառն կալուածապետութիւնը (Տաճիկ բնակչութիւն) վերահաստատուելու անուղակի փորձ փորձելով և մեծապէս յաջողելով, արդէն գործնական ապայոյցը սուած են այն կարևորութեան, զոր Հայք՝ իբրև ամենին աւելի շահ ունեցող պէտք էր տային և պէտք է տան հողատիրութեան ՚ի Հայաստան:

Այս չօտիւր՝ թէ և համառօտի բացատրութեամբ բաւական է մեզ՝ արդարացիելու համար այն հետևանքները, զորս երկրորդ յօդուածի մը մէջ յայտնելու պատիւը պիտի ունենամք:

(Մասիս)

Ի Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Մէկ երկուսարդ անգլիոսի, մաքրելով ձեռնոցները պետութեան և չը սպասելով նրանց ցածրելուն՝ հարգում է նրանց. յետոյ նկատելով ձեռնոցի վրա մէկ թիկի կտոր և կամենալով կորել այդ թիկը, մտտեցրեց ձեռք մտնել և ամբողջ ձեռնոցը իսկոյն կրակ ընկաւ: Երկուսարդ ազլիկը փախեցաւ, և կամենալով կրակը հանգցնել սեղանը ձեռք և իսկոյն միւս ձեռքն էլ կրակ ընկաւ, և նախ քան թէ օգնութիւն կը հասցնէին, նա բաւականին վնասվեցաւ:

Նոր տարվայ գիշերը Չատամի մօտ զծերերի պարահանդէս կայացաւ, ուր մասնակցում էին 59 անձեր, որոնց տարիքը եթէ միասին գումարենք, կը գոյանայ 4,259 տարի: Միջին թիւով անձն մի ձերի տարիքը 70-ի էր հասնում: Պարահանդէսը լուսաղէմին վերջացաւ: Նշանաւորն է այն բանը, որ այս բոլոր պարերը անյայտ են ներկայ նոր սերունդին:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ
 Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 4 փետրվարի: Պետական բանկի 50% տոմսակն առաջին շրջանի արժէ 93% ր., երկրորդ 927/8 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 933/8 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 229 ր., երկրորդ 228 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 1/8 կ., ոսկին արժէ 7 ր. 63 կ.: Ռուսաց 1 բուրլ Լոնյօնի վրա արժէ 253 2/3 պէնս. Ռուսաց 100 բուրլ Գերմանիայի վրա արժէ 219 մարկ 7/8 պէնս., Փարիզի վրա 272 Ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ